

1.2.4. Տրանսպորտ

Բեռնափոխադրումներ. 2000թ. հունվարին հանրապետությունում, ըստ բեռնափոխադրումների իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և մասնավոր հատվածի բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, բեռնափոխադրումների ծավալը կազմել է 264.5 հազ.տոննա, որը 1999թ. հունվարի նկատմամբ նվազել է 33.3 %-ով: Բեռնաշրջանառությունը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 219.5 մլն.տոննա-կմ (ներառյալ խողովակաշարային տրանսպորտը) և նախորդ տարվա հունվարի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 17.9 %-ով:

2000թ. հունվարին, բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշները, տրանսպորտի առանձին տեսակների կտրվածքով

	2000թ.հունվար	2000թ.հունվարը 1999թ.հունվարի նկատմամբ, տոկոսներով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա	264.5	66.7
<i>այդ թվում՝</i>		
Երկաթուղային տրանսպորտով	53.9	81.5
արտահանվել են բեռներ	1.3	19.6
ներկրվել են բեռներ	51.5	112.9
ներհանրապետական փոխադրումներ	1.1	7.4
ավտոտրանսպորտով	104.6	52.1
<i>որից՝</i>		
արտահանվել են բեռներ	1.9	48.7
դրանից՝		
ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով	0.3	15.8
ներկրվել են բեռներ	11.0	80.9
դրանից՝		
ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով	2.5	65.8
ներհանրապետական փոխադրումներ	91.7	50.1
օդային տրանսպորտով	0.8	133.3
<i>որից՝</i>		
արտահանվել են բեռներ	0.3	195.6
ներկրվել են բեռներ	0.5	107.9
խողովակաշարային տրանսպորտով	105.2	81.5

Երկաթուղային տրանսպորտ: 2000թ. հունվարին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 1999թ. հունվարի նկատմամբ նվազել է 18.5 %-ով: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 95.6 % (1999թ. հունվարի՝ 69.0 %-ի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 2.4 % (նախորդ տարվա հունվարի՝ 8.5 %-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 2.0 % (նախորդ տարվա հունվարի՝ 22.5 %-ի դիմաց):

Ըստ բեռների հիմնական տեսակների, 2000թ. հունվարին 1999թ. հունվարի նկատմամբ քիմիական և հանքային պարարտանյութերի փոխադրման ծավալն ավելացել է 6.1 անգամ, նավթ և նավթամթերքներինը՝ 25.9 %-ով, իսկ ցեմենտի փոխադրման ծավալը նվազել է 61.9 %-ով, հացահատիկի և աղացվող մթերքներինը՝ 38.6 %-ով:

Երկաթուղային տրանսպորտով փոխադրված բեռների բաժինն ընդհանուր բեռնափոխադրումների ծավալում կազմել է 20.4 %, նախորդ տարվա հունվարի 16.7 %-ի դիմաց: 2000թ. հունվարին ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի բեռնաշրջանառության ցուցանիշը 1999թ. հունվարի նկատմամբ նվազել է 12.8 %-ով, կազմելով 15.0 մլն. տոննա-կմ: Վազոնների միջին օրական բեռնաթափումը նույն ժամանակաշրջանում նվազել է 12 միավորով և կազմել 27 վազոն՝ նախորդ տարվա հունվարի 39 վազոնի դիմաց, իսկ բեռնումը նվազել է 10 միավորով և կազմել 2 վազոն՝ նախորդ տարվա հունվարի 12-ի դիմաց: Նույն ժամանակաշրջանում 0.3 օրով արագացել է

վազոնապտույտը:

Ավտոմոբիլային տրանսպորտ: 2000թ. հունվարին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը կազմել է 104.6 հազ.տոննա (1999թ. հունվարի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 47.9 %-ով), որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 10.5 % (1999թ. հունվարի՝ 6.8 %-ի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 22.7 % (նախորդ տարվա հունվարի՝ 48.7 %-ի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 1.8 % (նախորդ տարվա հունվարի՝ 1.9%-ի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 15.8 % (նախորդ տարվա հունվարի՝ 48.7 %-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 87.7% (նախորդ տարվա հունվարի՝ 91.3%-ի դիմաց): 2000թ. հունվարին բեռնաշրջանառությունը կազմել է 1.7 մլն.տոննա-կմ և 1999թ. հունվարի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել 10.5 %-ով:

2000թ հունվարին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում ավտոտրանսպորտի բաժինը կազմել է 39.5 %՝ 1999թ. հունվարի 50.6 %-ի դիմաց:

Օդային տրանսպորտ: 2000թ. հունվարին, ըստ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների տվյալների, օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը կազմել է 0.8 հազ. տոննա (1999թ. հունվարի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 33.3 %-ով), որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 62.5 % (1999թ. հունվարի 83.3 %-ի դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը՝ 37.5% (1999թ. հունվարի 16.7%-ի դիմաց): Օդային տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը կազմել է 1.0 մլն.տոննա-կմ և նախորդ տարվա հունվարի նույն ցուցանիշի նկատմամբ աճել 42.9 %-ով: Օդային տրանսպորտով փոխադրված բեռների բաժինն ընդհանուր բեռնափոխադրումների ծավալում կազմել է 0.3 % և նախորդ տարվա հունվարի նույն ցուցանիշի նկատմամբ աճել 0.1 %-ով:

2000թ. հունվարին, ըստ բեռնամաքսային հայտարարագրերի, խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն է ներկրվել 105.2 հազ. տոննա բնական գազ և նախորդ տարվա հունվարի նույն ցուցանիշի համեմատ նվազել՝ 18.5 %-ով, բեռնաշրջանառությունը՝ 18.5 %-ով և կազմել 201.8 մլն տոննա-կմ: 2000թ. հունվարին խողովակաշարային տրանսպորտի բաժինը բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում կազմել է 39.8 %՝ նախորդ տարվա հունվարի 32.6 %-ի դիմաց:

Ուղևորափոխադրումներ: 2000թ. հունվարին հանրապետությունում, ըստ ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների և մասնավոր հատվածի ուղևորատար ավտոտրանսպորտային միջոցների գործունեության գնահատման, ուղևորափոխադրումների ծավալը (առանց էլեկտրատրանսպորտի) կազմել է 9257.3 հազ.մարդ, որը 1999թ. հունվարի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 0.4 %-ով: Հաշվետու ժամանակաշրջանում ուղևորաշրջանառությունը կազմել է 166.2 մլն. ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվարի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 2.8 %-ով:

2000թ. հունվարին ընդհանուր ուղևորափոխադրումների ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2000թ. հունվար	2000թ. հունվարը 999թ.հունվարի նկատմամբ, տոկոսներով
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ	9257.3	99.6
այդ թվում՝		
երկաթուղային տրանսպորտով	48.8	50.7
ավտոտրանսպորտով	9170.6	100.1
օդային տրանսպորտով	37.9	93.3

2000թ հունվարին, ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտով փոխադրված ուղևորների տեսակարար կշիռը՝ կազմել է 0.5 % (նախորդ տարվա հունվարի համապատասխան ցուցանիշի 1,0%-ի դիմաց), ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 99.1%, նախորդ տարվա 98.6%-ի դիմաց, իսկ օդային տրանսպորտինը

կազմել է 0.4 % և նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ մնացել է անփոփոխ:

Երկաթուղային տրանսպորտ: 2000թ. հունվարին, ըստ հաշվետվությունների տվյալների, ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը 1999թ. հունվարի նկատմամբ նվազել է 49.3 %-ով, իսկ ուղևորաշրջանառությունը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 2.4 մլն. ուղևոր-կմ, որը նախորդ տարվա հունվարի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 20.0 %-ով:

Ավտոմոբիլային տրանսպորտ: 2000թ. հունվարին ուղևորափոխադրումների ծավալը 1999թ. հունվարի նկատմամբ ավելացել է 0.1 %-ով, իսկ ուղևորաշրջանառությունը կազմել է 128.4 մլն. ուղևոր-կմ, որը նախորդ տարվա հունվարի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 0.2 %-ով:

Օդային տրանսպորտ: 2000թ. հունվարին, ըստ օդային տրանսպորտով փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների հաշվետվությունների տվյալների, փոխադրվել է 37.9 հազ. մարդ, որի 51.2 %-ը (19.4 հազ. մարդ) կազմել է հայաստանյան շարժակազմով իրականացված ուղևորափոխադրումների ծավալը: Հայաստանյան շարժակազմով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալի 0.5%-ը կազմել են չարտերային չվերթներով կատարված ուղևորափոխադրումները (նախորդ տարվա հունվարի 0.4 %-ի դիմաց):

Հաշվետու ժամանակաշրջանում օդային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը կազմել է 35.4 մլն. ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվարի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 10.8 %-ով:

Էլեկտրատրանսպորտ: 2000թ. հունվարին, ըստ էլեկտրատրանսպորտի կազմակերպությունների հաշվետվությունների տվյալների, էլեկտրատրանսպորտով փոխադրված ուղևորների քանակը կազմել է 1921.4 հազ.մարդ և 1999թ. հունվարի նկատմամբ նվազել է 27.0 %-ով, իսկ ուղևորաշրջանառությունը կազմել է 72.5 մլն. ուղևոր-կմ և նախորդ տարվա հունվարի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է 27.5 %-ով:

Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների ծավալը, որը 2000թ. հունվարին կազմել է 58.5%, իսկ տրոլեյբուսով՝ 28.5, տրամվայով՝ 12.8 և ճոպանուղով՝ 0,2%:

Տրանսպորտային պատահարներ: Հանրապետությունում 2000թ. հունվարին, ըստ ՀՀ պետավտոտեսչության հաշվետվությունների տվյալների, գրանցվել է շարժակազմի հետ կապված պատահարների 71 դեպք, որն անցած տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 2.9 %-ով: Պատահարներից զոհվել է 23 և վիրավորվել 85 մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխանաբար 12 և 81 մարդու դիմաց: